## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար մուտքի հսկողության համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» նոյեմբերի 2019թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահող՝*

**Արթուր Եղիազարյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳՀՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

**Արթուր Ծամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

Բացակայում էր՝

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. **Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով և «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

«Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

2. **Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

«Էլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության գնահատման արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա. 22.05.2018թ. կնքված թիվ ՓՊՄԾՁԲ-4/3-1 պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանված է 2018թ. III եռամսյակ, սակայն այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացված տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձնման-ընդունման արձանագրության համաձայն կատարման փաստացի ժամկետը 26.12 2018թ-նն է.

բ. 07.11.2018թ. կնքված թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանված է 2018թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, ոչ ուշ մինչ 15.12.2018թ., սակայն այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացված տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող 2018թ. դեկտեմբերի 25-ի հանձման-ընդունման արձանագրությամբ կատարման փաստացի ժամկետը 4-րդ եռամսյակն է.

գ. 14.05.2019թ. կնքված թիվ 01/099 ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-55/19 պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար ներկայացված պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող հանձման-ընդունման արձանագրությունը հաստատած չէ պայմանագրի կողմերի կողմից:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

-հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019թ. նոյեմբերի 27-ին ժամը՝ 11:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

-մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2019թ. նոյեմբերի 26-ը ներառյալ, շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ Խորեն Պետրոսյան

Էդգար Մելքոնյան

Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար մուտքի հսկողության համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«27» նոյեմբերի 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Եղիազարյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ սնանկության դատարանի աշխատակազմի ղեկավար:

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

*հանձնաժողովի քարտուղար՝*

Արուս **Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊԸՀ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելու վերաբերյալ.**

«Էլիտս Ջի Էյ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

**2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

«Էլիտս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ «Էլիտս Ջի Էյ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը, որակավորումը և ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

1. հաստատել հայտի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից հայտարարել «Էլլիպս Ջի Էլ» ՍՊԸ-ին,

2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),

3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝

Խորեն Պետրոսյան

Էդգար Մելքոնյան

Արման Ղուկասյան

Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**պայմանագիր կնքելու որոշման մասին**

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/32»

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար մուտքի հսկողության համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա է հանդիսանում՝ Մուտքի հսկողության համակարգ:

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել "X"/ | Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/ | Անհամապատասխանության համառոտ նկարագրույթուն |
|---|---|---|---|---|
| 1 | «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ | X | | |

| Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել "X"/ | Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ/ |
|---|---|---|---|
| 1 | «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ | X | 57 340 000 |

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/32» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

Հեռախոս՝ **010-511-787**։

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**։

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ։**